

Հավելված
Հաստատված է Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2017 թվականի ----- -ի N---Ն որոշմամբ

«Հավելված
Հաստատված է Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2013 թվականի հուլիսի 31-ի N272Ն որոշմամբ

Կ Ա Ր Գ

ՀԱՆՐԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի (ցանցի շահագործում) լիցենզիա ստանալու հայտի (դիմումի) ընդունման, քննարկման, տրամադրման (մերժման), լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, լիցենզիայում փոփոխությունների կատարման, լիցենզիայի գործողության կասեցման, դադարեցման և լիցենզիայի վերաձևակերպման ընթացակարգերը:
2. Սույն կարգը չի տարածվում հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերից բացի որևէ այլ էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի, ինչպես նաև մրցութային դիմումների կամ աճուրդի միջոցով իրականացվող լիցենզավորման գործընթացի վրա:
3. Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շահագործումը ներառում է՝ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի ստեղծում կամ զարգացում, կամ օգտագործում:
4. Լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ունեցող անձը կարող է զբաղվել այդ գործունեությամբ լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից և լիցենզիայի գործողության ժամկետում:
5. Լիցենզիան տրամադրվում է մինչև 10 տարի գործողության ժամկետով:
6. Լիցենզիայի անբաժանելի մաս են համարվում լիցենզավորված գործունեությունն իրականացնելու պայմանները:
7. Լիցենզիան չի կարող օգտագործման տրվել այլ անձանց, օտարվել կամ գրավադրվել՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
8. Լիցենզիայի գործողությունը չի տարածվում լիցենզավորված անձի հետ համատեղ, այդ թվում համատեղ գործունեության պայմանագրով գործունեություն իրականացնող այլ

անձանց, ինչպես նաև լիցենզավորված անձի մասնակցությամբ հիմնադրված կամ գործող իրավաբանական անձանց վրա:

9. Առանց լիցենզիայի առկայության սույն կարգով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:
10. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) կարող է լիցենզիա տրամադրել մրցութային դիմումների կամ աճուրդի միջոցով՝ նույնիսկ ռեսուրսների որևէ սահմանափակության բացակայության պայմաններում, եթե համարում է, որ նման գործելակերպը լավագույնս կբավարարի Հայաստանի Հանրապետության սպառողների պահանջունքները էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում: Մրցութային դիմումների կամ աճուրդի միջոցով լիցենզիաների տրամադրումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:
11. Սույն կարգով նախատեսված իրազեկումը, այդ թվում փաստաթղթերի հանձնումը, կատարվում է օրենքով սահմանված կարգով և ժամկետներում, եթե սույն կարգով իրազեկման այլ ձև նախատեսված չէ:
12. Լիցենզիայի տրամադրման, լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, լիցենզիայի վերաձևակերպման համար գանձվում է պետական տուրք՝ օրենքով սահմանված կարգով և չափով: Հայտատուի (լիցենզավորված անձի) կողմից պետական տուրքի վճարման և օրենքով սահմանված ժամկետում այն չվճարելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

2. ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՅՏԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

13. Հայտատուի ներկայացրած հայտը մուտքագրվում է Հանձնաժողովում: Հայտը պետք է լրացված լինի համաձայն սույն կարգի N1 հավելվածի և պարունակի հետևյալ փաստաթղթերը.
 - 1) Գործարար ծրագիր, որը պետք է ներառի առնվազն հետևյալ տեղեկատվությունը.
 - ա. հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի (ցանցի շահագործման) նպատակը և սպասվող տնտեսական, սոցիալական և առևտրային արդյունքը,

բ. շահագործվող ցանցի ընդհանուր բնութագիրը և տեխնիկատնտեսական ամփոփ ցուցանիշները,

գ. շուկայի ուսումնասիրություն,

դ. հիմնական տեխնոլոգիական և տնտեսական լուծումներ (ծառայության տեխնոլոգիայի և հիմնական տեխնոլոգիական սարքավորումների ընտրության տեխնիկական և տնտեսական հիմնավորումը),

ե. ցանցի շահագործման տարածքը,

զ. ցանցի շինությունների և կառույցների հիմնական բնութագրերը,

է. ցանցի շահագործման ժամանակացույցը՝ ըստ փուլերի,

ը. ներդրումների արդյունավետությունը (ցանցի ստեղծման կամ զարգացման աշխատանքների արժեքը բացված տեսքով, ֆինանսավորման հնարավոր աղբյուրները, ծառայությունների ինքնարժեքի հաշվարկը, ներդրումների ռիսկի գնահատականը, ցանցի ստեղծման կամ զարգացման և շահագործման ժամկետները)։

2) կապի ոլորտում քաղաքաշինության փաստաթղթերի մշակման լիցենզիա ունեցող անձանց կողմից մշակված հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի տեխնիկական նախագիծ կամ հայտատուի կողմից մշակված հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի տեխնիկական նկարագիր՝ Հանձնաժողովի կողմից սահմանված պահանջներին համապատասխան։

14. Հայտում ներառված տեղեկությունները պետք է հասանելի լինեն հանրությանը։ Եթե հայտատուն միջնորդում է Հանձնաժողովին և հիմնավորում, որ հրապարակման ենթակա որոշակի տեղեկություններ կազմում են առևտրային գաղտնիք, և Հանձնաժողովն այդ փաստարկները համարում է հիմնավոր, ապա նման տեղեկությունները հրապարակման ենթակա չեն։

15. Հայտատուն, օրենքով սահմանված կարգով, պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվության հավաստիության համար։

16. Հայտը և նրանում ընդգրկված փաստաթղթերը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կարգով սահմանված պահանջներին։

17. Հանձնաժողովի համապատասխան ստորաբաժանումը հայտը ստանալու օրվանից 8 աշխատանքային օրվա ընթացքում ստուգում է հայտի ամբողջականությունը, նրանում ընդգրկված փաստաթղթերի ձևակերպման ճշտությունը և համապատասխանությունը

սույն կարգի 13-րդ կետի պահանջներին՝ բացառությամբ սույն կարգի 18-րդ և 19-րդ կետերով նախատեսված դեպքերի:

18. Հանձնաժողովը, հայտում ոչ էական թերությունների (վրիպակների և նման այլ բացթողումների) առկայության, ինչպես նաև փաստաթղթերի թերի լինելու դեպքում, դրանք հայտնաբերելու պահից 2 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև սույն կարգի 17-րդ կետում նշված ժամկետի ավարտը, գրավոր առաջարկում է հայտատուին 5 աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թերությունները, որի դեպքում այդ կետով սահմանված ժամկետը երկարաձգվում է մինչև հայտատուի կողմից համապատասխան թերությունների վերացումը, բայց ոչ ուշ, քան մինչև դրա համար սահմանված ժամկետի ավարտը:

19. Հանրային կամ ազգային անվտանգության շահերից ելնելով Հանձնաժողովը կարող է մինչև սույն կարգի 17-րդ կետով սահմանված ժամկետի ավարտը հայտատուից պահանջել 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել լրացուցիչ տեղեկություններ և փաստաթղթեր, որի դեպքում այդ կետով սահմանված ժամկետը երկարաձգվում է մինչև հայտատուի կողմից համապատասխան տեղեկությունների և փաստաթղթերի ներկայացումը, բայց ոչ ուշ, քան մինչև դրա համար սահմանված ժամկետի ավարտը:

20. Հայտը չի ընդունվում ուսումնասիրության, եթե՝

- 1) հայտատուն օրենքով սահմանված կարգով սնանկ է ճանաչված կամ գտնվում է սնանկության կամ լուծարման գործընթացում,
- 2) հայտատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են կամ չեն համապատասխանում օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կարգով սահմանված պահանջներին,
- 3) հայտատուն սույն կարգի 18-րդ կետով սահմանված ժամկետում չի վերացրել թերությունները կամ սույն կարգի 19-րդ կետով սահմանված ժամկետում չի ներկայացրել Հանձնաժողովի պահանջած լրացուցիչ տեղեկություններն ու փաստաթղթերը,
- 4) հայտատուն, օրենքի կամ իր կանոնադրության համաձայն, իրավունք չունի զբաղվել հայցվող լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով,
- 5) լիցենզիայի տրամադրումը հակասում է հանրային և ազգային անվտանգության շահերին:

21. Հանձնաժողովը հայտի ուսումնասիրության բացասական արդյունքի մասին գրավոր տեղեկացնում է հայտատուին՝ հայտն ստանալու օրվանից ոչ ուշ, քան սույն կարգի 17-

րդ կետով սահմանված ժամկետում: Հայտի ուսումնասիրության բացասական արդյունքի դեպքում հայտը պահպանվում է Հանձնաժողովում:

22. Հայտատուն, Հանձնաժողովի կողմից հայտի ուսումնասիրության բացասական արդյունքի պատճառները վերացնելուց հետո, այն մուտքագրում է Հանձնաժողով: Այդ դեպքում հայտատուն և Հանձնաժողովն առաջնորդվում են սույն կարգի 17-21-րդ կետերով սահմանված պահանջներով և ժամկետներով:

23. Հայտը բավարարվում կամ մերժվում է Հանձնաժողովի կողմից՝ դրա ներկայացումից հետո 23 աշխատանքային օրվա ընթացքում:

24. Հանձնաժողովը Հայտը մերժում է, եթե՝

- 1) հայտատուն օրենքով սահմանված կարգով սնանկ է ճանաչված կամ գտնվում է սնանկության կամ լուծարման գործընթացում,
- 2) հայտատուն օրենքի կամ իր կանոնադրության համաձայն իրավունք չունի զբաղվել հայցվող լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով,
- 3) հայտատուի ներկայացրած փաստաթղթերը կամ տեղեկությունները թերի են կամ չեն համապատասխանում օրենքների, իրավական ակտերի կամ սույն կարգի պահանջներին,
- 4) լիցենզիայի տրամադրումը հակասում է հանրային և ազգային անվտանգության շահերին:

25. Հայտի մերժման մասին Հանձնաժողովի որոշումը չի կարող ազդեցություն ունենալ անձի՝ հաջորդ հայտերի քննարկման վրա:

26. Հանձնաժողովը լիցենզիայի տրման կամ հայտի մերժման մասին որոշման պատճենը 5 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է հայտատուին:

27. Հանձնաժողովում յուրաքանչյուր լիցենզավորված անձի համար վարվում է հաշվառման գործավարություն և կազմվում անհատական գործ:

28. Լիցենզիա տրամադրելու մասին որոշում ընդունելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, Հանձնաժողովը լիցենզիան՝ մեկ օրինակից, հանձնում է լիցենզավորված անձին, իսկ նրա չներկայանալու դեպքում՝ լիցենզիան պահվում է անհատական գործում՝ մինչև լիցենզավորված անձի ներկայանալը: Լիցենզիա ստացած անձի ստորագրությամբ լիցենզիայի ստացման կտրոնը (հավելված N 2) պահվում է անհատական գործում:

3. ԼԻՑԵՆԶԻԱՅՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ, ԼԻՑԵՆԶԻԱՅԻ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

29. Լիցենզիայում փոփոխություններ կարող են կատարվել ինչպես լիցենզավորված անձի, այնպես էլ Հանձնաժողովի նախաձեռնությամբ:
30. Լիցենզավորված անձը լիցենզիայում փոփոխություններ կատարելու համար դիմում է Հանձնաժողով՝ ներկայացնելով առաջարկվող փոփոխությունների անհրաժեշտությունը և դրանք հիմնավորող փաստաթղթերը:
31. Հանձնաժողովը, սույն կարգի 23-րդ կետով սահմանված ժամկետում կայացնում է լիցենզավորված անձի լիցենզիայի պայմաններում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին համապատասխան որոշում կամ գրավոր մերժում է դիմումը՝ սույն կարգի 24-րդ կետով սահմանված հիմքերով:
32. Հանձնաժողովի նախաձեռնությամբ Լիցենզիայի պայմաններում փոփոխությունները կատարվում են Լիցենզավորված անձի համաձայնությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ նախատեսվող փոփոխություններն անհրաժեշտ են Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի պատշաճ կատարումն ապահովելու համար:
33. Հանձնաժողովի նախաձեռնությամբ լիցենզիայում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության դեպքում Հանձնաժողովը պատշաճ ձևով այդ մասին տեղեկացնում է լիցենզավորված անձին՝ հիմնավորելով փոփոխությունների անհրաժեշտությունը:
34. Լիցենզավորված անձն իր դիրքորոշումը Հանձնաժողովին հայտնում է Հանձնաժողովի սահմանած ժամկետում՝ անհամաձայնության դեպքում ներկայացնելով իր հիմնավորումները:
35. Լիցենզավորված անձը, հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի տարածական զարգացում նախաձեռնելու դեպքում, պարտավոր է լիցենզիայում փոփոխություն կատարելու համար հայտ ներկայացնել Հանձնաժողով, կցելով սույն կարգի 13-րդ կետով նախատեսված փաստաթղթերը: Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի տարածական զարգացում է հանդիսանում լիցենզիայով ամրագրված գործունեության աշխարհագրական տարածքից դուրս որևէ այլ տարածքում գործող ցանցային ենթակառուցվածքների ընդլայնումն այնպես, որ նոր ստեղծվող ենթակառուցվածքները ֆիզիկական և տրամաբանական առումով կապակցված լինեն գործող ցանցային ենթակառուցվածքներին:

36. Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի տարածական զարգացում նախաձեռնելու և այդ նպատակով հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի (ցանցի շահագործման) լիցենզիայի փոփոխման դեպքում, որի արդյունքում փոփոխվում է բազային տարեկան պետական տուրքի չափը՝ տարեկան պետական տուրքը ենթակա է համամասնորեն հաշվարկման և գանձման՝ հաշվի առնելով մինչև լիցենզիայի փոփոխումը և դրանից հետո նախատեսված տարեկան պետական տուրքի չափերը ու ընթացիկ տարվա այն ամիսների քանակը, որոնց ընթացքում գործել է յուրաքանչյուր տարեկան պետական տուրքի չափը: Ընդ որում, տարեկան պետական տուրքն այն ամսվա համար, երբ կատարվել է փոփոխումը, հաշվարկվում է հիմք ընդունելով փոփոխումից հետո նախատեսված տարեկան պետական տուրքի չափը:
37. Լիցենզիայի գործողության կասեցումը կամ դադարեցումն իրականացվում է «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» և «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում և կարգով: Լիցենզիայի գործողությունը դադարեցվելու դեպքում անհատական գործը պահվում է Հանձնաժողովում օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

4. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՎԵՐԱԶԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

38. Լիցենզավորված անձի վերակազմակերպման կամ նրա անվանման (անվան), կամ գտնվելու վայրի (բնակության վայրի) փոփոխման դեպքում լիցենզավորված անձը պարտավոր է այդ փոփոխությունները իրավական ուժ ստանալու օրվանից սկսած տասնհինգօրյա ժամկետում՝ լիցենզիայի վերաձևակերպման համար հայտ ներկայացնել Հանձնաժողով, կցելով տեղեկություններ պետական գրանցման համարի (պետական հաշվառման համարի) վերաբերյալ: Հայտերը բավարարվում կամ մերժվում են Հանձնաժողովի կողմից ոչ ուշ, քան Հայտն ստանալու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում:
39. Լիցենզիայի վերաձևակերպման հայտը մերժվում է, եթե՝
- 1) հայտատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են կամ չեն համապատասխանում օրենքների, իրավական ակտերի կամ սույն կարգի պահանջներին,
 - 2) հայտատուն օրենքի կամ իր կանոնադրության համաձայն զրկվել է հայցվող գործունեության տեսակով զբաղվելու իրավունքից:

5. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱԶԳՈՒՄԸ

40. Լիցենզիայում ամրագրված ժամկետի երկարաձգման համար լիցենզավորված անձը լիցենզիայի գործողության ժամկետի ավարտից առաջ հայտով դիմում է Հանձնաժողով՝ նշելով հայցվող ժամկետը և լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու վերաբերյալ հիմնավորումները:
41. Հանձնաժողովը հայտը մերժում է, եթե՝
- 1) հայտատուի ներկայացրած փաստաթղթերը կամ տեղեկությունները թերի են կամ չեն համապատասխանում օրենքների կամ այլ իրավական ակտերի պահանջներին,
 - 2) հայտատուն օրենքի կամ իր կանոնադրության համաձայն իրավունք չունի զբաղվել հայցվող լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով:
42. Հանձնաժողովը որոշում է ընդունում լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու կամ հայտը մերժելու մասին ոչ ուշ, քան մինչև լիցենզիայի գործողության ժամկետի ավարտը:
43. Եթե լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման հայտը ներկայացվել է լիցենզիայի գործողության կասեցման ժամանակահատվածում, ապա այդ ժամկետի երկարաձգման հարցը քննվում է միայն կասեցումը վերացվելուց հետո:

Դ Ի Մ ՈՒ Մ

1. Խնդրում եմ տրամադրել լիցենզիա հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի (ցանցի շահագործում) գործունեությամբ զբաղվելու համար:

(աշխարհագրական տարածքը, մարզը, բնակավայրը, լիցենզիայի գործողության հայցվող ժամկետը)

2. Հայտնում եմ, որ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացրած փաստաթղթերում առկա տվյալներն ամբողջական են և հավաստի:

3. Մույն դիմումին կցվում են՝

1) Գործարար ծրագիր

2) _____

3) _____

4) _____

(լիցենզավորվող անձի անվանումը, պետական գրանցման կամ պետական հաշվառման համարը, հարկ վճարողի հաշվառման համարը, գտնվելու վայրը (բնակության վայրը), հեռախոսը, ֆաքսը, էլեկտրոնային փոստը,

բանկային տվյալները)

(ղեկավարի անունը, ազգանունը)

(ղեկավարի ստորագրությունը)

« ____ » _____ 20__ թվական

ԼԻՑԵՆԶԻԱՅԻ (ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ) ՍՏԱՑՄԱՆ ԿՏՐՈՆ

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի

20__ թվականի _____ «___»-ի N _____ որոշում

1. Լիցենզավորված գործունեության տեսակը՝ _____

2. Լիցենզիայի գրանցման ամսաթիվը «___» _____ 20__ թվական

3. Լիցենզիայի գրանցման համարը N _____

4. Ստացված էջերի քանակը՝ _____

5. Տրված է՝ _____

(լիցենզավորված անձի անվանումը/անունը, ազգանունը,

գործունեության վայրը (բնակության վայրը), հեռախոսը, ֆաքսը, էլեկտրոնային փոստը)

(լիցենզիա ստացողի անունը, ազգանունը, անձնագրի կամ այն փոխարինող փաստաթղթի
սերիան և համարը,

ում կողմից և երբ է տրված)

6. Լիցենզիան ստացվել է՝

«___» _____ 20__ թվական

(լիցենզիա ստացողի ստորագրությունը)